

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_\_\_ի 2016 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N 564-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 564-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 1-ին կետի 2-րդ ենթակետում «13408.4» թիվը փոխարինել «11058.5» թվով, «13708.4» թիվը փոխարինել «11358.5» թվով:

2) 1-ին կետի 4-րդ ենթակետից հետո լրացնել նոր 5-րդ ենթակետ, հետևյալ բովանդակությամբ.

«5) «Սևան-Արտանիշ հատվածի Սևանա լճի ափամերձ 10 հա անտառապատված տարածքի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման համար 2016 թվականի ընթացքում ընդամենը՝ 2349.9 հազ. դրամ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 564-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

1. **Անհրաժեշտությունը՝** Սևանա լճի ափամերձ 10 հա տարածքի անտառապատման նպատակն է Սևանա լճի շրջակայքում ընդլայնել անտառածածկ տարածքները, ինչպես նաև նպաստել էրոզիոն պրոցեսների կանխարգելմանը, մակերեսային հոսքերի նվազեցմանը, քամու բացասական ազդեցություններից տարածքի պահպանմանը, միկրոկլիմայի բարելավմանը:

**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝** Սևանա լճի ափամերձ 10 հա (Սևան-Արտանիշ հատված) տարածքն անտառապատվել և ցանկապատվել է 2016 թվականի նոյեմբերին:

Անտառապատումը և ցանկապատումը կատարվել է նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան: Տնկվել է 50770 հատ սերմնաբուսակներ՝ փակ արմատային համակարգով: Որպես գլխավոր ծառատեսակ օգտագործվել է սոճենի, որից տնկվել է 25385 հատ: Ուղեկցող ծառատեսակներ են կեչին՝ տնկվել է 800 հատ, թխկին՝ 9385 հատ, հացենին՝ 8000 հատ:

Նկատի ունենալով տարածքի բնակլիմայական յուրահատուկ պայմանները, անտառապատված տարածքի տնկիների կաչողականությունը չվտանգելու նպատակով, անհրաժեշտ է կազմակերպել ոռոգման աշխատանքներ յուրաքանչյուր տարվա հուլիս-օգոստոս ամիսներին:

Հայաստանի Հանրապետության անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրինությունը «Հայջրնախագիծ ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունից անհատույց ստացվել է նշված տարածքի ոռոգման համակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Նախագծով նախատեսվում է նշված տարածքի ոռոգումն իրականացնել ինքնահոս եղանակով, 50 մմ տրամագծով 755 մետր երկարությամբ պոլիէթիլենային խողովակաշարով: Ոռոգման համար պահանջվող ջրի քանակը կազմում է 1,21 լ/վրկ: Կառույցի նախահաշվային

արժեքը կազմում է 2349,92 հազար դրամ, որից ԱԱՀ՝ 391,65 հազար դրամ: Սույն նախագծի 2-րդ կետով առաջարկվող թվերի փոփոխության և անհրաժեշտ գումարի համար աղբյուր է հանդիսանում այն, որ Հայաստանի Հանրապետության անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրինությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N564-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված աշխատանքների իրականացման համար կապալառու կազմակերպության հետ իրականացրած բանակցությունների արդյունքում ունեցել է 2.561.8 հազ. դրամ նախագծանախահաշվային գնի տնտեսում:

**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝** «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 564-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի նախատեսում գործող քաղաքականության փոփոխություն:

Անտառային տնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործմանը:

**Կարգավորման նպատակը և բնույթը՝** «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 564-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի հաստատմամբ Սևանա լճի ափամերձ 10 հա (Սևան-Արտանիշ հատված) տարածքի անտառապատման աշխատանքը կհամարվի ամբողջական, որի արդյունքում հիմնադրված անտառմշակույթներում ամռան ամիսներին, անհրաժեշտության դեպքում հնարավորություն կլինի իրականացնել ոռոգման աշխատանքներ, որը կապահովի տնկիների կաչողականության բարձր ցուցանիշ:

**Ակնկալվող արդյունքը՝** անտառապատ տարածքների ավելացում, բնակլիմայական պայմանների բարելավում, քամու բացասական ազդեցություններից տարածքի պահպանում, հողատարման երևույթների կանխարգելում:

**Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը՝** «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016

թվականի հունիսի 2-ի N564-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

### **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 564-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 564-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

### **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 564-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն ընդունելու դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 564-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն ընդունելու դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: